Շամախու չրջակայքը հարուստ է բաւականի նաւթի հանքերով, թէև մինչև այսօր նաւթ դուրս բերելու համար քաղաքիս մօտակայքում ոչինչ փորձ չէ եղած։ Բնադէտ պարոն Աբիխ իր այս կողմերը ճանապարհորդութեան ժամանակ քանի տարի առաջ, մինչդեռ Բաղուի նաւթի հորերը ևս յայտնի չէին, խորհուրդ էր տուած Շամախու բնակիչներին հորեր փորել Շամախու չրջակայքում, քանի որ այդ քաղաքը պարունակում է իր մէջ այդքան հարուստ նաւթի հանքեր, և յիրաւի քաղաքից մի քանի վերստ հեռաւորութեամբ որտեղից փորում են մի տեսակ կապույտ հող որով դեռևս որում են քաղաքի տների պատերը, նկատվում են նաւթի հետքերը, և մինչև անգամ չատ տեղեր գետինը ճեղքելով նաւթը ջրի հետ միախառնված դուրս է վազում, սակայն ոչ ոք չը կայ որ ուշադրութիւն դարձնէ այդ երևոյթի վրա, թէև տեղական բնակիչները կարող էին մեծ օգուտներ ստանալ, միայն վերջին ժամանակներս, ինչպէս լսում ենք, մի քանի պարոններ իրանց մէջ ընկերութիւններ հաստատելով խնդիրք են ներկայացրած կառավարութեան որ թոյլատրվի իրանց հորեր փորել։ Հաստատում են որ եթէ Շամախի հորեր փորվեն, այն ժամանակ Բաղուի հորերը բաւականի վնաս կը կրեն, որովհետև մի և նոյն ճիւղից են ստանում բաղուցիք նաւթ և այդ ճիւղի ուղղութիւնը անցնում է Շամախուց Բաղու։ Ինչպէս պարոն Մօրիցը իր հետախուզութեանց ժամանակ յայտնած էր որ Շամախում նաւթի հորեր փորելը մանաւանդ օգուտ է և այն կողմից որ այդ հորերի միջոցով կարելի է սահմանափակել այս քաղաքը սասանեցնող գազի ազդեցութենից, թէև այս պարոնը միշտ այն գաղափարն ունէր թէ յետ ու առաջ Շամախին էլի ծանր կերպով պէտք է զգայ երկրաշարժի վնասները։ Սակայն չատ հաւանական է որ այդ հորերը կարող էին օգտակար լինել գազի ոչնչանալուն, որովհետև Շամախին հրաբխային մի քաղաք է, և ոչ մի տեղից չունէ մի բացուածք որ թեթևացնէ նրա գազի ազդեցութիւնը։ 1872 թուականի երկրաշարժի սասակի ցնցումից քաղաքի մօտակայ մի սարի գագաթից լաւա էր արտադրվում և մինչև անգամ քաղաքից մի քանի վերստ հեռաւորութեամբ մի փոքրիկ գաշտի երես երկու ճեղք լինելով մի քանի օր չարունակ կրակ էր ցայտեցնում։ 1873 թուականին մի բնադէտ ինժիներ պ. Բիստրով, խնդիրք ներկայացրեց կառավարութեան որ թոյլատրվի իրան նորեր փորել Շամախու չրջակայքում, մի և նոյն ժամանակ խոստանալով, որ նա բոլորովին կը դադարեցնէ Շամախում տիրապետող երկրաշարժը. բայց որովհետև ոչ ոք ճանաչակից չեղաւ նրան, թէև չատ առաջարկութիւններ եղան մի քանի տեղացի վաճառականներից, և պ. Բիստրովը ևս նեղութիւն կրելով ստիպվեց կիսատ թողնել իր մտադրութիւնը, թէև գործը բաւականի առաջ էր գնացած։ Շամախու գաւառներից ամենահարուստը համարվում է Լահիճու գաւառակը. այդ գաւառը սարսարատ գիրք ունենալով պարունակում է բաւականի լեռնային հանքեր. այդ տեղից դուրս է գալիս ընտիր տեսակ պղինձ որից չինում են զանազան տեսակ ամանեղէններ։ Չը նայելով որ այս գաւառը հարուստ է մանաւանդ այդ մետալի հանքով, սակայն այդ հանքը սահմանափակվում է միմիայն իր մէջ։ Թուրք գործատերերը որոնց ձեռին է գտնվում այդ հանքը գիտեն միայն մի տեսակ պղնձեայ ամանեղէններ չինել, որոնք գործադրվում են միմիայն Շամախու վիճակում։ Այս գաւառը հարուստ է մանաւանդ ստորերկրեայ նաւթի հանքերով, որ չատ տեղերում նաւթը երկիրը ճեղքելով առաջ է վազում և թափվում է զանազան փոքրիկ գետակների մէջ։ Շամախու վիճակը բաժանվում է երկու գաւառի՝ այն է Գաբրիատանի և Լահիճու գաւառակները. բազմաթիւ հայի և թուրքի գիւղեր ցրված են այդ գաւառների մէջ. թուրքերը բնակիչների բազմութիւնն են կազմում. թուրք բնակիչների գիւղերը մօտ երեք հարիւր է հաշվում, հայերինը ոչ աւել քան յիսուն և տասի չափ ևս մալականի գիւղեր. այդ գիւղերից չատերը դեռ ևս խանների և բէկերի սեփականութիւններն են, որոնց բնակիչները անուանվում են նրանց ճորտերը։ Շամախու վիճակի թուրք հաստատ գիւղացիները մեծ մասամբ պարապում են երկրագործութեամբ և զանազան տեղերում ևս չերամապահութեամբ, իսկ թափառական թուրք գիւղացիները խաշնարածութեամբ և մի քանի գիւղօրայքում ևս ինչպէս Գիւրդամիր, Բիլիսան, Սինջան և այլ մի քանի տեղերում պարապում են այդեզործութեամբ, սակայն որովհետև մահմեդական օրինաց համաձայն արգելված է իրանց խաղողից գինի պատրաստել, ուստի գինու ժամանակ խաղողը ծախում են քրիստոնեաների վրա։ Այդ գիւղօրայքում ամենայն ինչ հնադարեան ազիութեան մէջ է գտնվում, այնպէս որ նայելով նրանց խաչնարածութեան կամ երկրագործութեան, մարդ կարծում է թէ Ադամը միայն անցեալ չաբաթ ճաշակելով արգելեալ պտուղը արտաքսվեց դրախտից, իսկ այդեզործութիւնը յետ է մղում մարդու մինչև Նոյի ժամանակը։ Այս կողմի գիւղացիք առհասարակ չատ խեղճ և ողորմելի կեանք են անցուցանում, մի կողմից ագահ վաչիառու կալուածատէրը, միւս կողմից հարստահարող չարչի վաճառականները անխնայօրէն ծծում են նրանց ստացուածքը։ Գիւղական մթնոլորտը ազիութեան զանգուած է. ամեն կողմ հնադարեան նախապաշարումներ, ազիութիւններ չրջապատումեն խեղճ գիւղացուն, որ մի և նոյն ժամանակ և ցաւակցութիւն և ծիծաղ են արտադրում. մանաւանդ թափառական թուրք գիւղացին իր ընտանիքով, որդկերանցով բոլորովին մարդկութեան չրջանից դուրս մի ուրիշ չրջան է ներկայացնում իր բոլորովին բթացած յատկութիւններով։ Արանցից նախանձելի դրութեան մէջ չեն գտնվում և հայ գիւղացիները. մի և նոյն խեղճ, ողորմելի, անմխիթար գրութիւնը կարծես բաժին է ընկած միմիայն այս կողմի գիւղացիներին. իւրաքանչիւր մի քայլափոխում առաջ են գալիս գիւղական կեանքի այն ողորմելի տեսարանները որոնք անդադար յիշեցնում են թէ ինչ խեղճ կեանք են անցկացնում այս ողորմելի չինականը։ Հայ գիւղացիները ըստ մեծի մասին պարապում են երկրագործութեամբ և այդեզործութեամբ. այդեզործութիւնը նահապետական ձևով է առաջանում. որանց տերերը չը գիտեն ոչ ծառեր տնկելու, ոչ խաղող պահելու և ոչ գինի քաշելու եղանակը, բացի այն նահապետական եղանակից որ մենակ ընդհանրացած ուղղութիւնն է չատ տարիներից յետոյ այս գիւղացիների մէջ. մի քանի գիւղեր ինչպէս Պատրաստ և Պաղեան դուրս են բերում բաւականի լաւ գինի, սակայն նրանք կարող էին ունենալ ամենաընտիր գինի, եթէ գինեզործութեան արհեստը փոքր ինչ ծանօթ լիներ նրանց։

Հայ գիւղացին գիշեր ցերեկ անդադար աշխատում է իր ընտանիքի հետ, նա չէ ընկճում ոչ մի սոսկալի աշխատութեան առաջ, ամբողջ ամառը արեգակի տակ, քրտինքը երեսին, արօրը

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Վիլհելմ կայսրը շուտով առողջանալու է և վերքերը լաւանում են։ Այժմ հանդարտ է անցկացնում գիշերները. տենդից ազատված

է։ Բժիշկները նրա ծերութեան պատճառով չէին յուսայ որ այդչափ շուտ կառողջանայ։ Կառավարութիւնը տեսնելով ժողովրդի ցոյց տված մեծ համակրութիւնը դէպի կայսրը և սաստիկ բարկութիւնը կայսրի դաւաճանի դէմ, քաջալերվեցաւ լուծել պարլամենտը որ տպագրական ազատութիւնը և հրապարակային ժողովները ճնշող նոր օրէնքի ծրագիրը մերժեց։ Կառավարութիւնը յոյս ունէ որ այս միջոցով կազատվի ազգային ազատականներից, որոնք պարլամենտի մեծ մասն են կազմում։ Այդ կուսակցութիւնը թէպէտ պաշտպան է կառավարութեան, բայց իր այդ պաշտպանութիւնը շատ ծանրանում է կառավարութեան վրա և ճնշում է նրան։ Բիսմարկ իշխանը ասում է իր գրութեան մէջ որ դաշնակցական ժողովին ուղարկել է պարլամենտի լուծումը առաջարկելու համար։ «Որովհետև պարլամենտը մերժեց դէմոկրատական սոցիալիզմի առաջադիմութիւնը արգելող օրէնքի ծրագիրը և այնուհետև յունիսի 2-ին մի աւելի սարսափելի դաւաճանութիւն գործվեցաւ կայսրի կեանքի դէմ, որ ապացուցանում է թէ սոցիալական գաղափարները արդէն ինչ սոսկալի առաջադիմութիւն են արել, կառավարութիւնը նորից և աւելի ծանր կերպով պարտաւորված է զբաղվել այդ հարցով թէ ինչ միջոցներ հարկաւոր են տէրութիւնը և մարդկային ընկերութիւնը պաշտպանելու համար։ Ս. յունամենայնիւ, ըէյխստագի մեծամասնութեան գրութիւնը յոյս չէ տալիս որ նորից մի այնպիսի օրէնքի ծրագիր առաջարկելը աջող հետևանք ունենայ։ Այս հանգամանքներում, երևի թէ որոշված է ըէյխստագը լուծել։ Հետևապէս, ստորագրեալը պատիւ ունեմ առաջարկելու, սահմանադրութեան 24-երորդ յոդուածի զօրութեամբ որ դաշնակցական ժողովը հաճի վճռել ըէյխստագի լուծումը։»

Արդեօք նոր ընտրութիւնները կը համապատասխանե՞ն կառավարութեան ցանկութիւններին՝ յուլիսի վերջին օրերը կը յայտնեն այդ։ Առ այժմ, հասարակային կարծիքը այնչափ զրգռված է կայսրի դաւաճանների դէմ որ գուցէ Բիսմարկի քաղաքականութիւնը աջողվի։

ԹԻՒՐՔԻԱ

—

«Politische Corresp.» լրագիրը հրատարակել է մի յիշատակագիր որ Բ. Դուռը ուղարկած է մեծ պետութիւններին։ Այդ գրութեան մէջ, Բ. Դուռը աշխատում է ցոյց տալ թէ սպառնալիքից վախենալով ստորագրել է Սան-Ստէֆանոյի դաշնագրին և թէ ռուսաց հաւատարմատարները իրան ժամանակ անգամ թոյլ չէն տուել խորհելու համար այնպիսի փափուկ հարցերի վրա, որպիսի են դաշնագրի մէջ պարունակվածները։ Թէ շատ տեղերի համար իրան ասել են որ ռուսների ձեռքն անցած են, մինչև որ ինքն յետոյ իմացել է թէ Թիւրքաց ձեռքում գտնվում են եղել, բայց դաշնագիրը ստորագրելուց առաջ քննութիւն անելու և տեղեկանալու ժամանակ չէն թողել և այլն։ Վերջապէս, այնպիսի բաներ են գրված յիշատակագրի մէջ որ մարդ զարմանում է թէ Բ. Դուռը ինչպէս համարձակվում է ներկայացնել նրան կոնգրէսում և իր պատիւը ոտնակոխ անելով բողոքել իր ստորագրութեան դէմ։ Եթէ այդ յիշատակագիրը «Politische Corresp.» լրագրում հրատարակված չը լինէր, որ ընդհանրապէս կարող է ստոյգ աղբիւրներից տեղեկութիւններ ստանալ, շատ տարակուսելի կերևէր մեզ։

Կ. Պոլսից հաղորդում են որ յունիսի 8-ին (մայիս 26), սուլթանը մեչիդն է գնացել սովորականին համեմատ ուրբաթ օրվայ աղօթքը անելու համար։ Հետևապէս սխալ է մի քանի լրագիրներում հրատարակված լուրը թէ սուլթանը այլ ևս չէ համարձակվի երևալ իր ժողովրդին։ Թիւրքիայի կողմից կոնգրէսում ներկայ գտնվողները սրանք են. Կարաթէոդորի էֆէնդի որ յոյն է ազգով և պետական երկրորդ քարտուղար էր արտաքին գործերի մինիստրութեան բաժնում, և որ հասարակային շինութիւնների մինիստր անուանվեցաւ մուշիրփաշայի ատենակալը բարձրանալով, որպէս զի կարողանայ Բերլին գնալ իբրև առաջին հաւատարմատար, փոխանակ Սադիկ-փաշայի։ Երկրորդ հաւատարմատարն է Մէհմէդ-Ալի-փաշան, Շումլայի զօրաբանակի նախկին գլխաւոր հրամանատարը որ, ինչպէս արդէն յայտնի է, իր ծնունդով գերմանական ազգին է պատկանում և յետոյ մահմեդականացած է։ Երրորդ հաւատարմատարն է Սաատուլլահ բէկը որ երբեմն տէրութեան թարգմանի և գրաքննիչի պաշտօններ վարած է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինից հեռագրում են «Голосъ» լրագրին. «Կոնգրէսի այսօրվայ գործնական նիստին անդամների մեծ մասը ներկայացան ժամի երկուսին կէս օրից յետոյ։ Փողոցների վրա ահագին բազմութիւն կար։ Պոլիցիան երբեմն ստիպված էր լինում արգելել ժողովրդին անցնել Վիլհէլմշտրասէ փողոցի այն կողմը, որտեղ գտնվում է կայսերական կանցլերի պալատը։ Հաւատարմատարները հագել էին սև ֆրակներ և չքանչաններ էին կրում։ Առաջինները ներկայացան ռուսաց հաւատարմատարները, յետոյ Թիւրքիայի ներկայացուցիչները։ Զը նայելով, որ իշխան Գորչակով հիւանդ է (նրա ստամոքսը աւերված է), այնուամենայնիւ ներկայացաւ կոնգրէսի նիստին։

—Բերլինից հեռագրում են, որ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր պ. Վադինգտոն օգուտ է քաղում իր Բերլինում գտնվելուց, որ ծանօթանայ գիտնական աշխարհի հետ։ Նա այցելում է զանազան գիտնական անձանց և հիմնարկութիւններին։ Օրերումս պ. Վադինգտոն այցելեց դաւանութիւնների մինիստր պ. Ֆալկին և նրա մօտ մնաց բաւական երկար ժամանակ։

—Բերլինից հեռագրում են լրագիրներին, որ յունիսի 5-ին հրատարակած բիւլէտէնից գերմանական կայսրի առողջութեան մասին, երևում է, որ նորին մեծութեան դրութիւնը բաւականացուցիչ է։

—Բերլինից հեռագրում են լրագիրներին, որ Աւստրիայի և Անգլիայի հաւատարմատարները համաձայնել են միմեանց հետ մի քանի կէտերի վերաբերութեամբ։

—Բերլինից հեռագրում են, որ իշխան Գորչակովի երկրորդ որդին հասաւ Բերլին և իջաւ «Hotêl Royal» հիւրանոցում։ Բերլին հասնելուց յետոյ իշխանի որդին չուտով գնաց ռուսաց դեսպանատունը։

—Լրագիրներում կարդում ենք, որ գերմանական թագաժառանգը յունիսի 4-ին Պոտսդամում մի ճաշ է տուել, որին հրաւիրված են եղել Պոտսդամի շրջականերում բնակվող արիստոկրատները և անգլիական լիազօր հաւատարմատարները իրանց ուղեկիցների հետ։

—Բերլինից հեռագրում են, որ կոմս Շուվալով խորհրդակցել է կոմս Կօրտիի հետ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունիսի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 98 ր. 50 կ., երկրորդ 96 ր. երրորդ 96 ր., 55 կ., չորրորդ 96 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 238 ր. 75 կ., երկրորդ 233 ր. 50 կ., արևելեան 94 ր. 87 կ., ոսկին 7 ր. 96 կ.։ Տրամադրութիւնը ամուր է։

ձեռքին երկիրն է վարում, այգիները դալամում և բոլոր գիւղական աշխատութիւնները կատարում և այդ բոլորը միմիայն իր երկու ձեռքի օգնութեամբ. նրան յայտնի չէ ոչ մի աշխատութիւնը թեթևացնող հնարք, նրա հնարքները իր երկու ձեռքերը, իր կինը, իր զաւակներն են։ Հայ գիւղացու ընտանեկան կեանքը շատ խղճալի դրութեան մէջ է գտնվում, տգիտութիւնը և նախապաշարումները հայ գիւղացու առաստաղի տակի անբաժին ընակիչներն են. գիւղացիների ընտանեկան կեանքի շրջանի մէջ իգական սեռը, այնպէս անարգված, այնպէս արհամարված է ինչպէս չէ կարող ոչ մի թշնամու զինուոր լինել թուրք բռնիբուզուկների ձեռքին։ Գիւղացին ծեծում է իր կինը այնպէս սոսկալի կերպով ինչպէս ծեծում են տավարին կամ գոմէշին։ Շատ անգամ ես ականատես եմ եղած այդպիսի խեղճերի ծեծվելուն։ Երևակայեցէք ձեզ մի ահագին հատ գաւազան, որով նրանք քշում են իրանց գոմէշները, որ այնպէս զարհուրելի կերպով իջնում է մի խեղճ, ողորմելի, անօգնական կնոջ գլխին մինչև որ անգութ հարուածողը բոլորովին չէ յոգնում հարուածների իջեցնելուց։ Սակայն չը նայելով սրան գիւղացին մի օր անգամ չէ կարող ապրել առանց իր կնոջ, որովհետև կինն է նրա միակ հարստութիւնը. կինը գիշեր և ցերեկ իբրև մի անքան կենդանի աշխատում է նրա համար։ Նրա պարտաւորութիւնը շատ մեծ է, գիւղական անքան կենդանի աշխատում է նրա համար։ Նրա պարտաւորութիւնը շատ մեծ է, գիւղական կեանքի շրջանի մէջ նա հոգում է տան ամեն մի հարկաւորութիւնը, պահպանում է երեխայքը, կարում կարկատում է նրանց և իր մարդու շորերը, կթում է կովերը, քերում, մաքրում է գոմը, կերակրում է կենդանիները, եփում է կերակուր, մանում, գործում է, օգնում է իր մարդուն դաշտում և այգում և մի և նոյն ժամանակ ամեն օր ծեծ է ուտում իր անգութ մարդու ձեռքից։ Զը նայելով սրան նա միշտ համբերող է, որովհետև դարևոր սարկական կեանքը՝ նրան ուսուցել է համբերութիւն, իսկ նրա մարդը որ մի հասարակ եսավաղի, վոգնիկի մօտ հեզ, խեղճ, ստրուկ է, իրանից մի փոքր մեծի մօտ վախենալով և ձեռքերը սրտին խաչած դողալով է խօսում, իր կնոջ, իր ընտանիքի մօտ առիւծ է դառնում։

Հայ գիւղացիք առհասարակ շատ մնօտի, ինքնասէր, հպարտ ստրուկներ են, նրանցից մինը եթէ մի քանի առակ, մի քանի մասալ գիտէ նա ամենից գիտուն մարդ է համարում իրան, ոչ ոք չէ կարող նրա հանդէպ կանգնել, ոչ ոք չէ կարող նրա հետ խօսել։ Նա իր համագիւղացիների մօտ հպարտութեամբ գլուխը ցցած է մանում, միևնոյն անգամ շատ ժամանակ չէ կամենում մարդ ճանաչել, մի խնջոյքի, մի ուրախութեան ժամանակ ունքերը կիտած, երեսը թթուացրած, ամենի գլուխ է նստում և մի խօսք եղած ժամանակ, իրան այնպէս ձև է տալիս որ երբէք ոչ մի գիտնական ֆիլոսոֆ չէր կարող այն դիրքն ընդունել։ Նա իր կեանքը անդադար օրինակ է բերում իր որդկերանց, իր բարեկամներին։

Շատ պարոններ, որոնք գիւղական կեանքի մէջ ոչ մտած և ոչ եկած են, գիւղական պարզ անարատ կեանք ասելիս բերաններից ջուրն է վազում, բայց չը գիտեմ ինչ պէտք է ասէին այդ նահապետական կեանքով զմայլվող պարոնները եթէ մի անգամ նկատէին այդ մաքուր, անարատ կեանքը։

Մեր կողմի գիւղերը, մանաւանդ համեմատութեամբ իրանց հարևան մալական գիւղերի հետ շատ խղճալի դրութեան մէջ են գտնվում. անմաքրութիւնը տիրած է ամեն կողմ, դաշտերում, անտառներում ընակվող կենդանիները աւելի մաքուր են լինում, քան այդ գիւղական խրճիթների ընակիչները. գիւղացին չը գիտէ ինչ ասել է մաքրութիւն և հետևապէս բոլորովին անտեղեակ է անմաքրութեան հետևանքին։ Գիւղական անները առհասարակ շատ անկարգ և անկանոն են լինում չինված գետնի երեսին բարձրացած աղուէսի կամ գայլի որջի նման. տան ինչպէս արտաքին այնպէս և ներքին կողմը մի և նոյն ամխիթաբեր երևոյթն է ներկայացնում։ Բոլոր հայ գիւղօրէից և ոչ մէկում չը կայ արտաքնոց. իւրանչիւր մի գիւղացու քաղ ծառայում է իրան արտաքնոցի տեղ, գիւղացին կոխոտում է դուրսը գտնվող բոլոր աղտեղութիւնները և այնպէս առանց մաքրելու ներս է մտնում իր տան մէջ և այդ է պատճառը որ գիւղացու տանից գիշեր և ցերեկ անպակաս է լինում զզուելի գարշահոտութիւնը։ Առողջապահական կանոնները սրանց բոլորովին անծանօթ են. նրանք առանց որոշելու ուտում են ամենայն ինչ, ինչ որ պատահում է։ Գիւղացի մանուկը դեռ ևս իրան անկողնից դուրս չեկած հայ է կրծոտում և հացը ձեռքին տկլոր նա դուրս է թռչում իր անկողնից, թավալվում է ամեն տեսակ աղտեղութիւնների մէջ. ոչով չը կայ նրան զզուեցնող, որովհետև իրանք ևս այդպէս տեսած և այդպիսով են մեծացած։ Վերջապէս հայ գիւղական կեանքը ներկայացնում է մեզ այնպիսի մի տխուր երևոյթ, որ հազիւ յոյս լինի ուղղելու նրան։ Այդ գիւղօրայքի մէջ երբեմն գտնվում են բաւականի հետաքրքրական յիշատակարաններ. սրանցից մինը Մէյսարի անուամբ երևելի է իր մի աւերակ վանքով որի հնադարեան շինութիւնը և տեսքը արժէ ուշադրութեան։ Սաղեան գիւղում ևս գտնվում է մի հնաշէն, այժմ կիսաւերակ դարձած վանք Ս. Ստէփանոսի անուամբ որի արձանագրութիւններից ինչպէս երևում է հազար տարի է այս վանքի շինութիւնը. սրա մէջ գտնվում է Ս. Ստէփանոսի ձախ ձեռքի բթամատը ոսկեայ տուփի մէջ շրջապատած։

Առհասարակ Շամախու շրջակայքը հարուստ է ամենայն տեսակ պտղատու բուսականութեամբ։ Անտառների կողմից ևս աղքատ չէ այս վիճակը. սրա անտառների մէջ երբեմն գտնվում են շատ հսկայ հնդարեան ծառեր։ Մի փոքրիկ հայ գիւղի մօտ գտնվում է մի հսկայ ընկուզի ծառ որի մէջ փորած է մի բաւականի լայն սենեակ ուր երբեմն մի քանի երիտասարդներ պատսպարվում են անձրևի և հեղեղի երեսից. սենեակ ուր երբեմն մի քանի երիտասարդներ պատսպարվում են անձրևի և հեղեղի երեսից. կայ այլ ևս մի ուրիշ ընկուզի ծառ, որի շրջապատը 14 արշինի չափ է. առհասարակ ընկուզի ծառեր բաւականի շատ են Շամախու շրջակայքում։ Հայ գիւղացիները կտրում են այդ ծառերը և ծախում Եւրօպայի վաճառականներին, ստանալով նրանցից միայն իրանց ծառը կտրելու աշխատութեան վարձը։ Բացի հայերի և թուրքերի գիւղօրայքից կան այլ ևս տասնաչափ մալականի գիւղօրայք. չը նայելով որ այդ մալականները բաւականի անմաքուր և աղտեղի կեանք են անցուցանում, սակայն էլի թուրքերի և հայերի մօտ նոքա կարող էին օրինակ դառնալ. նրանց անները գոնէ չունեն այն անվայելուչ և անյարմար ձևերը, որոնց մենք նկատում ենք հայ գիւղօրայքում։ Մալականները գլխաւորապէս պարապում են երկրագործութեամբ և ֆուրգոնչիկութեամբ. առհասարակ մալականները շատ աշխատասէր ժողովուրդ են, մանաւանդ սրանց կանայքը, որոնք իրանց տղամարդուա ջու ձեռքն են համարվում։ Սրանց մէջ կան շատ հարուստ գիւղացիներ, թէև աշխատող, բայց մի և նոյն ժամանակ շատ չատակեր են. սրանց ամենասիրելի ըմպելիքը թէյն է. իւրաքանչիւր մի մալական եթէ օրական 20 կամ 30 մեծ բաժակ թէյ չը խմէ, նա չէ կարող ապրել։ Ծիծաղելի է մանաւանդ սրանց մէկ տեսակ սովորութիւնը թէյ խմելու ժամանակ. նրանք դնում են սամովարը ճիշդ սենեակի մէջտեղ սեղանի վրա, տան բոլոր անդամները շրջապատում են սեղանի շուրջը. ճիշդ սեղանի վրա մի կանգնաչափ բարձրութեամբ կախած է առաստաղից մի բարակ թոկ, այս թոկի ծայրին ամրացրած է կէս փութաչափ մի կտոր շաքար, թէյ խմողը երբ շաքարի հարկաւորութիւն է զգում, ձեռքով բռնում է ճոլոլակ եղած շաքարը կծում և բաց է թողնում, յետոյ միւսը և այդպէս չարունակաբար մինչև թէյը վերջացնելը, բայց այդ տեսակ ըմպելը միայն մի քանի հին մալական գիւղերի սովորութիւն է։ Մալականները առհասարակ չափից դուրս կամակոր են լինում, ոչ մի աշխատութիւն չէ կարող նրանց իրանց ասածից յետ դարձնել. սրանք մանաւանդ նորատեաց և միշտ հնութեան հետևող ժողովուրդ են։ Առաջին ժամանակները սրանք բաւականի բարոյական ժողովուրդ էին համարվում. խմիչքը, արբեցողութիւնը, ծխելը զզուանք էին ազդում սրանց, բայց վերջին ժամանակներս սրանք այս մոլութեանց եռանդուն խնկարկուներն են դառած։ Ընտանեկան անբարոյական կեանքը բաւական զարգացած դրութեան մէջ է գտնվում սրանցում. մարդու և կնոջ մէջ տիրող համեստ կենցաղավարութիւնը աղճատված է բոլորովին։ Բայց այս անգամ կարծեմ բաւական է մեր խօսակցութիւնը գիւղացոց կեանքի մասին։ Մենք կաշխատենք մի ուրիշ անգամ աւելի ընդարձակ կերպով ծանօթացնել մեր ընթերցողներին այդ կողմի գիւղացիների հետ և երևան հանել նրանց մէջ տիրապետող լաւ թէ վատ յատկութիւնները։

Ա. Զախարեանց.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՕԼԵԱՆ հեղուկ և փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ $1^1/_2$ ր., ԽԻՆԱՅԻ ԻՒՂ $1^1/_4$ ր., ցետրատ մագնեզիայի 2 ր., ՌՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԵՐԵՍ և անգլիական օղի $1^1/_2$ ր., ճանապարհի ամաններ դիւժինը 3 ր., Թէյի գդալներ (չեն սևանում) $1^1/_2$ րուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կօպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական շորեր և չը Թրջվող վերարկուներ 4 րուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կտաւ 10 ր. և բարձր, տրիկօ 1 ր. և բարձր, ԴԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամազեի 1 ր. արշինը, շղԹաներ (Աբիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.։ Մի և նոյն խանուԹում շուտով կը ստացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՆՈՂ անուանված մի դեղ, և այլն։

9—20

Մամուլի տակից դուրս եկաւ «Սկզբունք քրիստոնէական հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» անունով կրօնագիտութեան նոր դասագիրքը։ Աշխատասիրողն է Կովկասեան հայերին քաջածանօթ նախկին Թեմական վերատեսուչ, իսկ այժմ Գօրուայ արքունական ուսուցչական դպրոցի կրօնուսոյց արժ. հ. Ստեփանոս Տէր-Ստեփանեան։ Դասագիրքը Թարգմանօրէն կազմուած է ռուս նշանաւոր գրող հ. Սօկօլօվի սկզբնական ձեռնարկից և բովանդակում է իր մէջ կարևոր գիտելիքներ հին և նոր կտակարանից, բազմաԹիւ աղօԹքներ, քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր դաւանելիքը, քրիս. սկիզբը և տարածումը Հայաստանում. եկեղեցու եօԹն խորհուրդները, հաւատոյ հանգանակը և այլն։

Դասագիրքը զարդարած է 25 հատ ամենագեղեցիկ խոշոր պատկերներով հին և նոր կտակարանից և նշանակված է իբրև ձեռնարկ մեր ժողովրդական տարրական ուսումնարանների համար։ Գինն է 50 կօպէկ. գումարով առնողներին 45 կօպէկ։ Ծախվում է բացառապէս Թիֆլիս՝ «Կենտրոնական գրավաճառանոցում։»

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Տամօժէննայա փողոցի վրա Յունաց եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇԻՆԵՐ կօշիկների, Թամբերի, կառքերի արուեստների համար և նոյնպէս հում կաշիներ։

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանտօրայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ։ Մաս մաս ծախվում է Սիօնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում։

25—23 (2)

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ

ՀԱՑ ԿԺԱՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ, ԵՒ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ աւարտած գիմնազիական կուրսը պատրաստում է երեխաներին ամեն տեսակ ուսումնարանների համար։ Հասցէն կարելի է իմանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, Պ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ։

1—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ-ՔԱՀԱՆԱՅ, որ իր ուսումը ստացել է Ներսիսեան Դպրոցում, ուր և ունի ուսուցչի պաշտօն, գնալով ամառանոց ԿՕՋՕՐ՝ ԿՏԱՅ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ. ցանկացողները կարող են հարցնել Կօջօրի հայոց եկեղեցու սենեակներում։

1—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ, ծախվում են ի մէջի այլոց հետևեալ հայերէն նոր գրքերը.

1. Փոքրիկ ժողովրդական Այբբենարան գիւղական ուսումնարանների համար, գինն է 5 կօպ. գումարով առնողներին զիջումն կը լինի։
2. Գէորգ Բարխուդարեանի նոր Թարգմանութիւնները՝ Դօն Կարլոս, ՆաԹան Իմաստուն և Օրլէանի կոյս, իւրաքանչիւրը 60-ական կօպ.
3. Դօն-Քիշօտ Լամանչեցի Թարգ. Յ. Առաքելեանի, գինն է 70 կօպ.
4. Լեոնի Վէշտը՝ Շահ-Ազիզեանի գինն է 1 ր. 25 կ. ճանապարհի ծախսը գնողների վրա է։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ յունիսի 11-ին աճուրդ կը լինի քաղաքական հողի մի մասը ծախելու համար։ Հողը գտնվում է երկրորդ բաժնի 15-դ մասում, Կախետինկի փողոցի վրա։ Այդ հողի մեծութիւնը 251 քառ. սաժէն է և պիտանի է շինութեան համար։

1—3

Только что возвратившись изъ заграницы привезъ съ собою большой выборъ разныхъ карманныхъ золотыхъ и серебряныхъ ЧАСОВЪ ремонтуаровъ различныхъ системъ, какъ-то, репитирныхъ (Rèpétition à munites) съ календарями (à quantième) докторскіе часы (Secondes indepèndantes) и т. д. Выборъ сдѣланъ мною у лучшихъ женевскихъ фабрикъ, изъ той самой партіи которая была отправлена на Парижскую всемирную выставку; за вѣрность хода часовъ магазинъ гарантируетъ.

Большой выборъ разныхъ золотыхъ, бриліантовыхъ и серебр. вещей очень изящная работа; не смотря на курсъ, цѣны умѣренныя.

Магазинъ С. КАЦЪ

Дворцовая улица № 3.

(332) 5—4.

Ցանկանում են ունենալ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ պարապէր 9 տարեկան երեխայի հետ և նրան բէալական գիմնազիայի առաջին դասատան համար պատրաստէր։ Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը։

1—2

ԿԻՐ կարելի է ստանալ ամեն ժամանակ Կուկիայում, Նիկօլաևսկի փողոցի վրա Վ. Լ. Պատկօվի և ընկ. սպիրտի պահեստին կից։ Տուն № 44։

1—3

ՅՈՒՆԻՍԻ 14. Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունիսի 13-ին)

	Ր.	Կ.
Ռուկին (պօլուիմպերիալը)	8	30
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1310	—
Վիգրիշնի 5% առաջին փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ամէ 112 գլ.	121	—
Դաւրեժի բարաԹը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	300	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	—
» միս տեսակը.	7	80
» չաքարուազը.	6	—
» տրանզիտը. .	6	50
» մաքուր վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Թուղթը Թուշի . . .	8	—
» Թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	—	90
Մոմը բնաճարպի (стеар.)	13	—
Մետաքս Նուխվայ . .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լաւը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» ճվանի . . .	22	—
» մարտինկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կօպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական։

Երթեւեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, $9^1/_2$ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ.

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Րիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Րիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխեթ .	90	68	38
Գօրի. .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ .	5. 22	3. 92	2. 18
Րիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ Թէ նամակներ, Թէ լրագիրներ և Թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կօպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամէրիկա . . .	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտօվ կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Գավրօնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակստ վեներական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտօվ մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԹԻՖԼԻՍ. Օր. Ա. Խ. Ա. Անցեալ համարի մէջ տպեցինք ձեր յօդուածը։ Շարունակեցէք գրել։ Անդադար «Մշակ» կարդալով երևի դուք լաւ ըմբռնել էք նրա ուղղութիւնը և այդ ուղղութեան համեմատ կը գրէք։ Մենք շատ ուրախ ենք լինում, երբ մի նոր աշխատակցուհի ենք գտնում։

—ՇՈՒՇԻ. Վիճակային կոնսիստօրիա. Կարծում էք պաշտօնաԹղԹերը միայն գրաբառ կարելի է գրել։ Այնուամենայնիւ չնորհակալ ենք, որ նամակը ուրիշ լրագրին ուղարկեցիք և մեզ միջոց տուիք «Մշակի» էջերը աւելի օգտակար յօդուածի համար պահել։

—ՕԶՈՒՐԳԷՏ. Պ. Պ. «Մշակ» կուղարկենք, տեղեկութիւնները կը տանք տիկնօջը, գուցէ ձեզ էլ նամակ կը գրենք։

Дозволено Цензурою 13 Іюня Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ